Անցնելով կրօնական խնդիրներին, պ. Նախարարը ասել է հետևեալը.

Ես թշնամի եմ կրօնական հայածումների և կողմնակից խղճի կարելոյն չափ կատարեալ ազատութեանը, բայց որոշ վերապահութեամբ։ Սակայն, Ռուսաստանը վերջին տարիներն այս ուղղութեամբ շատ է առաջացել։ Ես կը շարունակեմ բոլոր ջանքերս գործադրել, որպէս զի մեր ընդարձակ Պետութեան մէջ խաղաղ ապրեն բազմազան դաւանութիւնները։

Նոյնպիսի համակրելի կարծիք յայտնել է պ. Նախարարը ե՛ւ հրէաների վերաբերմամբ։

Ընդհանրապէս Ֆրանսիացի թղթակիցը իւր բարձրաստիճան խօսակցին նկարագրում է ոգևորութեամբ, հիացած նրա լուսամիտ ուղղութեան վրայ։

ԹԻՖԼԻՍԻ ԹԵՄԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴ

Հեռագիրը ամսոյս 25-ին հաղորդեց, որ Սանահնի վանքի վանահայր գերապատիւ Տ. Գարեգին եպիսկոպոս Սաթունեանցը Բարձրագոյնս հաստատուած է Վրաստանի և Իմերեթի Հայ Լուսաւորչական թեմի միաձակաւոր Առաջնորդ։

Նորին սրբազնութիւնը ծնուած է 1853 թուին Աշտարակ գիւղում։ Վարդապետ է ձեռնադրուել 1876 թուին և այն ժամանակից յաջորդական և առաջնորդական պաշտօններ է վարել բազմաթիւ տեղերում, այն և Գօրի, Նուխի, Ալէքսանդրօպոլ, Գանձակ և Շուշի քաղաքներում և ամեն տեղ թողել է բարի յիշատակ. իւր պաշտօն վարած ժողովրդի մէջ սրբազան Սաթունեանը յայտնի է որպէս հաստատամիտ և դրական մարդ, դպրոցական գործը սիրող, եկեղեցու և եկեղեցականների բարեկարգութեանը նախանձախնդիր, խաղաղարար և մանաւանդ իրրև չինարար։ Ուր և պաշտօնավարել է նորին սրբազնութիւնը՝ ամեն տեղ էլ նորա հեռանալիս անչափ ցաւել են և մինչև վերջ էլ ամենքի իղձն է եղել, որ նորից վերադառնայ իրանց մօտ։ Իսկ Հայ. եկեղեցու արդի Վեհապետից եպիսկոպոս ձեռնադրուելով 1901 թուին, սրբազանը կարգուեց վանահայր մեր հինաւուրց և հռչակաւոր, բայց վերին աստիճանի աւերակ և մոռացութեան մատնուած Սանահնի վանքի, որը, ինչպէս յայտնի է վերջերս Սանահին այցելող բազմաթիւ ուխտաւոր հայ ժողովրդեան, ներկայումս, շնորհիւ սրբազան Գ. Սաթունեանի անձնուէր և սրտացաւ աշխատութեան, այնպէս է վերաշինուած և բարեկարգուած հիմնովին, որ կարելի է ասել, յիշեցնում է իւր անցեալ փառքը։

Ցոյս ունինք, որ նորին սրբազնութեան անցեալի փորձառութիւնը և Հայ եկեղեցու բազմաթիւ կենդրոնավայրերի մօտիկ ծանօթութիւնը առհաւատչեայ կլինի Տփխիսի բազմապահանջ թեմի բարոյական չինութեան։